փաղանց է, կամ Երշակաւանայ գոյութեան և տևողութեան ժամանակը պիտի երկարի։

Եւ միթէ Հայաստան այնքան չարաբարոյ էր, որ երեք տարուայ միջոցում այնքան ժողով մեղաւորաց արտադրէր իւր մէջէն. քրիստոնէութիւնը արդեօք ի՞նչ ներգործութիւն արած էր հասարակաց ժողովրդեան սրտի և հոգւոյ վրա, որ քրիստոնէական առաքինութեան ճանապարհէն այնքան շեղուելով, բոլորովին ևս քրիստոնէութեան ճանապարհէն դուրս գային, և աւանդառուք, պարտականք, գողք և սպանողք և այլք այնքան ահագին բազմութիւն կազմէին մարդկան մեղաւորաց՝ չորս տարի միայն ոտքի վրա կեցող Աւանի մէջ։

Խորենացին՝ որ հինգերորդ դարում կապրէր մերձաւոր ժամանակաւ Երշակաւանայ կործանմանը, իսկական անցքը կհամառօտէ այսքան խօսքի մէջ. «Եւ նախարարացն Հայոց ժողովեալ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Երշակաւանայ, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին»։

Եթէ ճշմարիտ լինէր Փոստոսի գրուածքը, որ իրանից յառաջ մեծին Ներսիսի ժամանակակից էր, նորա գրած առասպելախօսութիւնքը ևս կրկրկնէր Խորենացին, թէ քան հազար տուն էր Երշակաւան, և յանիծից սրբոյն Ներսիսի եղաւ այն հարուածն և այն. բայց որովհետև Խորենացին ևս քաջ գիտէր Ղազարայ նման, եթէ անհաւատարիմ ձեռն աղաւաղած էր Ռիւզանդայ գրուածքը, վասն այսորիկ և ինքն ևս անդէպ համարեց այնպիսի առասպելախօսութիւն յետագայից թողուլ իբրև ստոյգ պատմութիւն անցից։

Իսկ Մեսրոպը տասներորդ դարում պատմագրելով, Խորենացու անխառն գրուածքը թողլով, բառ առ բառ կառնուի Ռիւզանդայ, Զամչեանի ասածին պէս։

Այսքան խորհրդածութիւն անելէն ետքը, կտեղադրենք ի վերջոյ և Երշակաւանայ տեղւոյն դիրքն ու ձևը՝ հազար հինգ հարիւր տարի կործանմանէն ետքը։

(Մ-ՅԵ-Ը Ի ՅԵՏ-Է-Յ)

ԱՐԻԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ

ՔԱԹ-ԱԼԻ ՇԱՀԻ ՎԷՐԱՑ

(Շ-Ր-Ն-Է-Ղ-Ն)

Լ. Դ. Սուլէյման միրզայ, ծնեց երեքշաբաթի օրը 4 մհառամի 1225 հիջրի։ Սա ունէր 3 զաւակներ, որոնցից մինը ուստր, երկուքն դուստրներ։ Անունը որդւոյ Դաւուդ միրզայ, որի մայրն էր Ղայ—Ռէկում անուն, դուստր Խոսրահանցի Սադրազամ Հաջի Մահամմեդ խանի։

Լ. Դ. Գաթուլլահ միրզայ, ծնեց չորեքշաբաթի 9 ռաջաբի 1226 հիջրի՝ ունէր տիտղոս Շուռուլ սալթանէ, երեք զաւակներ, որոնցից երկուսն ուստրներ և մինը դուստր։ Առաջին որդին Նուրուդահը միրզայ, սրա մայրն էր դուստր Հա-

հիր ուլ դովլէ Իբրահիմ խան կաճարի։ 2, Իբրահիմ խան՝ համամայր վերնոյն։

Լ.Օ. Մելիք Մանսուր միրզայ, համամայր Մելիք Կասում միրզին, ծնեց երեքշաբաթի օրն 22 բաջարի 1226 հիջրի. սա միշտ Թարվէղ կենակէր և չտեսաւ իւր հօրը. բայց հօր մահուանէն յետոյ երբեմն երբեմն Թէհրան կերթար։ Ընդաւակ մեռաւ, լեզուն կակաղ էր և շատ ծաղրածու։

Լ.Ա. Ռէհմէն միրզայ տիտղոսով Ռըհադուլ դովլէ, ծնեց գիշերն լոյս կիւրակի 23 շավվալի 1226 հիջրի՝ վեց զաւակնէր ունէր, չորսն ուստրներ և երկուսն դուստրներ։ Առաջին որդին Սասան միրզայ, մայրն էր Վ.բասատանի կողմէն։ 2, Մեհրթի կուլի խան, մայրն էր դուստր Գուլուի Կաճար Մէհրթի — Կուլի խանի, որ Ասաբաբաթ Ռէզվարբէկի էր։ 3, Դարաբ միրզայ, համամայր Սասան միրզին։ 4. Ֆրիդուն միրզայ, համամայր Մեհրթի — Կուլի խանի։

Լ.Բ. Սուլթան—Մահամմեդ միրզայ, տիտղոսն էր Սէիֆուլ դովլէ՝ որ ծնեց օրն հինգշաբաթի 26 Ջամադիուլ ավվալի 1228 հիջրի. սրան զաւակ չծնեց, մայրն էր Խոպահանցի երևելի Թաջուդովլէն, զլխաւոր թագուհի պալատի։

Լ.Թ. Սուլթան – Սելիմ միրզայ, ծընեց հինգշաբաթի օրը՝ 26 շավվալի 1228 հիջրի. ունէր 4 զաւակներ, երկուսը ուստրներ և երկուսը դուստրներ։ Առաջին որդին Ազատ խան միրզայ։ 2, Հիւսէյն միրզայ, համամայր վերնոյն։

Խ. Սուլթան—Մուստաֆայ միրզայ որ ծնեց 11 զիլկադդէ 1228 հիջրի. սրան երկու որդի ծնան, 1, Սուլթան Սէյֆուր միրզայ, որի մայրն էր դուստր Ջէնդ Խանլար խանի, որդւոյ Ալի — մուրադ խանի։ 2, Սուլթան — Մահմուդ միրզայ, համամայր վերնոյն։

ԽԱ. Սուլթան — Իբրահիմ միրզայ, ծնեց շաբաթի օրը՝ 19 Ջամադիուլ ախրի 1228 հիջրի. ունէր չորս զաւակներ, մինը ուստր, երեքն դուստրներ։ Ընունը որդւոյ Հասան – Ալի միրզայ, մ յրն էր դուստր Երևանի Կաճար Հիւսէյն — Ալի խանի։

ԽԲ. Սէիֆ ուլլահ միրզայ, համամայր Ռըհադուլ դովլէի, ծնեց երեքշաբաթի օրը՝ 14 բաջարի 1229 հիջրի. ունէր 4 զաւակներ, երկուսն ուստրներ՝ և երկուսն դուստրներ. 1-րդ որդին Նասրուլլա միրզայ՝ 2, Ջ.հան Ռախշ միրզայ, երկուսն էլ համամայր էին. որոց մայրն էր Վ.բասատանի կողմէն։

ԽԳ. Նահեահ միրզայ. ծնեց գիշերն լոյս շաբաթի 1, Մհառամի 1230 հիջրի. ունէր մի դուստր։

ԽԴ. Զաքարեա միրզայ, ծնեց գիշերին լոյս շաբաթի օրը 26 բաբիուլ էվվէլի 1234 հիջրի. չունէր զաւակ, համամայր էր վերնոյն։

ԽԵ. Մահամմեդ Ամին միրզայ, ծնեց երկուշաբաթի օրը 10 բաբիուլ սանիի 1234 հիջրի. ունէր երկու դուստրներ։

ԽԶ. Սուլթան—Համզէ միրզայ, ծընեց գիշերն լոյս չորեքշաբաթի օրը 21 բամազանի 1234 հիջրի. չունէր զաւակ։

ԽԷ. Ֆարռուխ Սիար միրզայ, համամայր Սուլթան—Մահամմեդ միրզին մականուանեալն Նայիր ուլ դովլէ։

ԽԸ. Սուլթան Ահմեդ միրզայ մականուանեալն Բաղուլ դովլէ, ծնեց ուր-

բաթի օրն 19 Զիլկադդէի 1234 հիջրի. անզաւակ էր սա։

ԻԹ. Սահիբ Կրան միրզայ, ունէր մին որդի Մահամմեդ Հասան խան՝ սորա մայրն էր Դուլուի Կաճար Իբրահիմ խանի դուստրն։

Ի. Թէհմուրազ միրզայ, ծնեց ուրբաթի օրն 7 Ջամադիուլ էվվէլի 1235 հիջրի. անզաւակ էր սա։

ԻԱ. Հիւսէյն Կուլի խան մականուանեալն Ջհան — սուզ շահ, համայր Նահեահ միրզին անզաւակ է սա։

ԻԲ. Մահամեդ Հադի միրզայ, համայր Մահամմեդ Լամին միրզին։

ԻԳ. Փէրվեզ միրզայ։

ԻԴ. Ալի Կուլի միրզայ։

ԻԵ. Աբբաս Կուլի միրզայ, համայր վերնոյն։

ԻԶ. Ռամրան միրզայ։

ԻԷ. Օվրանկ միրզայ։

ԻԸ. Սուլթան Զալալէդդին միրզայ։

ԻԹ. Ամանուլլահ միրզայ։

Կ. Սուլթան Հիւսէյն միրզայ։

Ցարք — ալ Շահ դարձեալ անուանեալ ցուցակն։

Սրանք էին 48 հոգի. սրանցից երկուսն Ցաթ — Ալի Շահի կենդանութեան ժամանակն էին մեռած, և վեցն դեռ ևս չէին ամուսնացած նրա մահուան ժամանակն. իսկ մնացեալներն ամուսնացած ու զաւակներ ունէին։

Ա. Դուստրն էր Հմայուն — Սուլթան, տիտղոսով Խանում — խանուման, համայր Հիւսէյն Ալի միրզին, ամուսին էր Զահիրուդդովլէ Իբրահիմ խան Կաճարի, որ կուսակալ էր Ռէյրմանի, որից հինգ զաւակներ ունէր, միայն երկուսն ուստրներ էին։ Առաջին որդին Աբաս — Կուլի միրզայ։ 2. Աբուլ Ցաթ միրզայ։

Բ. Շահզադէ — Բէգում — Ջան, համայր Ցարման Ցարմայի, ամուսնացած էր Ամիր Մահմամեդ — Կասում խան Կըվանլուի հետ՝ մին որդի ունէր Սուլէյման խան անուն մականուանեալն Խան — խանան, և երկու դուստրներ՝ սրանց մինը ամուսնացաւ Մահամեդ Շահի հետ, յորմէ ծնաւ այժմեան Նասրադդին Շահն։

Գ. Սիդ — Բէգում, որ և Համդամ — Սուլթան տիտղոս ունէր. էր համամայր վերնոյն, ամուսնացաւ Նուրի Մահամեդ — Հաքի խան Ցարսստանի կուսակալի հետ և մեռաւ Մէքքէ խօլերայով։

Դ. Ումմ — Սալամա (*), մականուանեալ Գեալին — խանում, համամայր Մահամեդ — Ալի միրզին. շատ գեղեցիկ կգրէր նասրխ ասած ձեռագիրն և քանի՛ մի հատ նոյն տառերովը Կուրան էր գրած ու նուիրած Աթաբէթի եղած ուխտատեղերին. սա ամուսնացաւ շահի եղբօր որդի Հէյնալ — աբին խանի հետ, ունէր երկու դուստրներ և մին ուստր, որի անունն էր Մամմէդ — Ջաֆէր միրզայ։

Ե. Մարեամ խանում, համամայր Հըսամ ուլ սալթանէին, կին Աբդիուլ գով-

(*) Սրա մօր անունն էր Զիբա Զօհր խանում, Վրաստանի կողմերէն գերի բերած. իմ համոզմունքն այս է, որ Սոլոմէ այս ինքն Սոլոմէ է հասարակեալ անուն Վրաստանի Հայերի և Վրացիների միջին. վասն որոյ և էնպէս է անուանած իւր դուստրն։

լ՝ Ալլահեար խանի, որ կալանաւորեցաւ Թէվրիզ Պասկեւիչէն։ Ութն զաւակներ ունէր, որոնցից 4 դուստրներ և 4 ուսաբրներ էին, որոնց առաջինն էր Հասան խան երևելի Յալար տիտղոսովն (որ ապստամբեցաւ ընդդէմ Նասրադդին Շահին)։ 2, Միրզայ — Մահամմէդ խան մականուանեալն Ռէզլարբէկի։ 3, Մահամմեդ — Ալի խան։ 4, Հիւսէյն խան։

Զ. Գոխար — Ջհան խանում, երևելի տիտղոսով Գոխար ուլ դովլէ, որի մայրն էր Շուա ուլ սալթանէ։ Քանի մի օր ամուսնանալէն յետոյ Ահմեդ խանի հետ, որ որդի էր Գաթ — ալի Շահի եղբօրն, անջատուեցան նրանէ։ Յետոյ շատ երիտասարդներ առաջարկեցին նրան ամուսնանալ իւրեանց հետ, բայց նա բացասեց՝ իւրեան արժանաւոր ամուսին չգտնելով, մնաց առժամանակ, յետոյ գնաց ուխտ Մէքքէ, վերադարձաւ, շրջեց շատ ուխտատեղեր, էն տեղ էլ մեռաւ։ Նա բարիշը մեծ համարումն ունէր իւր վերայ, վանորոյ և շատ ամբարտաւան էր։

Է. Շահ — Ռէզում խանում, մականուանեալն Զիա ուլ սալթանէ, համամայր Մահամադ միրզին։ Շահի կանանոցի ամենայն գաղտնիք յայտնի էին նրան։ Սրա աքանչելի գեղեցկութեան համբաւն տարածուած էր ընդ բոլոր Պարսկաստանն՝ յետ հօր մահուան ամուսնացաւ օտարական գործերի նախարար միրզայ Մախսուդի հետ, և նրանէ ծնան զաւակներ։

Ը. Սուլթան — Ռէկում ևս համամայր Զիա ուլ սալթանէին, ամուսնացաւ Դուլուի — Մեհդի Կուլի խանի որդւոյ հետ, և քանի օրէն հետոյ իւր պատանեկութեան հասակումն վախճանեցաւ, թողից մի դուստր։

Թ. Գեօհար — Մելիք խանում, համամայր Թադաժառանգ Աբբաս միրզին, ամուսնացաւ նախ Կաճար Մամադէմին խան Նասաղչի — բաշւոյ հետ՝ երբ սրան սպանեցին Ռուսներ Շամքորի կռուումն, յետոյ ամուսնացաւ Կայիմզամ Միրզա Աբդուլ — Կասումի հետ՝ սրան էլ երբ Մահամմեդ Շահը խեղդել տուեց, յետոյ ամուսնացաւ Թարվիզի Կազի միրզայ Զաբաբ երևելի միրզայ Մէհդի Թարվիզու Շըխալեսլամի որդւոյ հետ, բայց սրա հետ շատ փոքր ժամանակ կացաւ ու ապահարզան տուեց և քանի մի տարի մընալէն հետոյ, խօլերայէն մեռաւ 1853 թուին Զինջանաբ գուղումն, որ Թարվիզէն 4 փարսախ հեռի է։

Ժ. Զէյնաբ խանում, համամայր Միւլք — Էրա Մահամմեդ — Կուլի միրզին՝ երկու անդամ գնաց Մէքքէ. վաստնորոյ և ստացաւ տիտղոսն Հաջի — Շահ. ամուսնացաւ Նըզամ ուլ դովլէ Սուլէյման խանի որդւոյ Կուանլու Խամայիլ խանի հետ։ Ունան սրանէ տասն զաւակներ, որոնցից մինը արու Ահմադ խան անուն։

ԺԱ. Խադիջէ խանում, սա ևս համամայր Մուլք — Էրային, ամուսնացաւ Մահամեդ Ռաղբը խան՝ մականուանելոյն Մէռուիս — Շահի հետ, որ էր որդի Շահի եղբօրն Հիւսէյն Կուլի խանի։ Զորս զաւակներ ունէր, մինը դուստր և երեքն ուստրներ։ Առաջին որդին Ասադուլլահ խան։ 2, Հիւսէյն խան։ 3, Մահամմեդ Հասան խան։

ԺԲ. Թիկան խանում, ամուսնացաւ Կուանղու Մուսայ խանի հետ. մին քանի ժամանակից յետոյ գնաց ուխտ Մէքքէ՝ նրանէ ծնան հինն զաւակներ, որոնցից հինգ որդիներ էին: Առաջին Ջաֆէր կուլի խան: 2, Մեհմի կուլի խան յանուն պապին: 3, Մահամմեդ կուլի խան: 4, Սուլթան — Թաղի խան: 5, Մուսա խան, որ ծնաւ իւր հօր մահուանէն հետոյ, վասընորոյ նրա անունով յորջորջեցին:

ԺԳ. Իզզաթ — Ղիսա խանում, ամուսնացաւ Շահի հօր եղբայր Հիսէյն կուլի խանի որդի Մուսայ խանի հետ, և սրա մահուանէն յետոյ գնաց Մէքքէ ուխտ, վերադարձաւ ու ամուսնացաւ Հաֆ միրզայ Ղասի՝ Մահամմեդ շահի առաջին նախարարի հետ: Առաջին ամուսնութենէն ծնաւ երեք դուստր և մին որդի Ալլահ կուլի միրզայ անուն Էլ — խանի մականուանեալն:

ԺԴ. Շամ — Խանում խանում, ամուսնացաւ միրզայ Մուսայ խանի հետ, որ էր եղբայր միրզայ Աբուլ — կասում — կայիմ — կամի:

ԺԵ. Խադիջէ — Սուլթան երևելի տիտղոսովն Իզզէթ ուլ դովլէ, ամուսնացաւ Իբրահիմ խան նազրի հետ, որ էր որդի Խալահանցի Հաջի Մահամմեդ Հիսէյն խան Սադրազամի: Ծնաւ մին դուստր և երեք արու զաւակներ, որոնց առաջին որդին Սադր ուլ դովլէ: 2, Ասուֆ ուլ դովլէ: 3, Մահամմեդ Խաղր խան:

ԺԶ. Դրախշանդէ — Գեօհար խանում, համամայր Իսմայիլ միրզին, ամուսնացաւ Իսմայիլ խանի հետ, որ էր որդի Հէլայ—խօր միրզայ խանլարի՝ չորս զաւակներ ծնան նրան, երկուսն դուստրներ և երկուսն ուստրներ, որոնց առաջինն է Նասրուլլահ միրզայ: 2, Միրզայ Ֆրիդուն:

ԺԷ. Գեօհար Շահ — Խէգում, ամուսնացաւ դուլուի կաճար Ալի Մահամմեդ խանի հետ՝ ունէր երկու դուստրներ և մին որդի Մահամմեդ խան անուն:

ԺԸ. Շահ — Սուլթան խանում, ամուսնացաւ ընդ Կուանղու Մահամմեդ Սադկ խանի որդւոյ Մուրթուզա կուլի խանի հօր եղբօր Ֆաթ — Ալի շահի: Ամուսնոյ մահուանէն յետոյ գնաց Քէարբալայի ուխտ և էնտեղ ամուսնացաւ Մուշթէիդ Շահրստանցի միրզայ Մահամմեդ Թաղի հետ: Առաջին ամուսնութենէն ունէր մին որդի Մահամմեդ Օսման խան անուն:

ԺԹ. Գեօհար խանում, ամուսնացաւ Իբրահիմ խան Շահի հօր եղբօր որդի Բօստամ խանի հետ, չորս զաւակներ ունէր, երեքն որդիներ, որոնց առաջինն Աբդուլ — Հիսէյն խան անուն: 2, Օսմբար խան: 3, Բօստամ խան, որ իւր հօր մահուանէն յետոյ ծնաւ:

Ի. Թաջի — Խէգում խանում, համամայր Շուջա ուլ սալթանէի, ամուսնացաւ Նասրուլլայ խանի հետ, որ էր որդի Կվանղու Զահիր ուլ դովլէ Իբրահիմ խանի. գնաց ուխտ Մէքքէ, ծնաւ հինգ զաւակներ, որոնց երեքն որդիներ էին, առաջինի անունն Իբրահիմ խան: 2, Մէհթի կուլի խան: 3, Խալիլուլահ միրզայ:

ԻԱ. Հիսան — Ջհան խանում, երևելի տիտղոսով՝ Վալիէ համամայր Շաւա ուլ Սալթանէի, ամուսին Քիւրդըստանի Վալի Խոսրով խանի, վեց զաւակներ ունէր, երեք դուստրներ՝ երեքն ուս-

տբրներ որոնց առաջին՝ Բըզայ կուլի խան։ 2, Կուլամ շահ խան։ 3, Խան Ահմեդ խան։

ԻԲ. Մահ — Ռեակում խանում, ամուսին Աբաղստանի Սուփահդար Կուլամ — Հիւսէյն խանի*). երեք զաւակ ունէր, մինը դուստր, երկուսն որդիներ. առաջինն Իւսուֆ խան։ 2, Հասան խան։

ԻԳ. Սարվ — Ջհան խանում, ամուսին Մհալաթի Գաւառապետ աղայ խանի, որին ազգէ ազգ Իսմայել իմամիցն ինջած են համարում Էնտեղի այս ինքն Մհալաթի ժողովուրդներն։ Աղայ խանիցը ծնան երեք զաւակներ, երկուսն դուստրներ, մինը որդի Ալի Շահ անուն։

ԻԴ. Խուրշիդ խանում, ամուսին Խամբսէի Աֆշար ցեղի գլխաւոր Աբբաս կուլի խանի՝ երեք զաւակներ ծնաւ, որոնցից որդի մինը Մահամմեդ խան անուն՝ մականուանեալն Վալի։

ԻԵ. Մօվլուդ—Սուլթան խանում՝ կին Բզայ կուլի խանի որդւոյ Դամկանցի Խամայիլ խան Սարդարի։ Սրանէ անջատուեցաւ, ամուսնացաւ Հաջի Հասան խանի հետ, որ էր որդի հօր եղբօր առաջին ամուսնոյն՝ անզաւակ մնաց։

ԻԶ. Ալիէ — Սուլթան խանում, կին Դամկանցի Ալի խանի, որ էր միրախոռ (ախոռապետ) շահի՝ ծնաւ մին դուստր և մին որդի Խսայ խան անուն։

ԻԷ. Զբրէյդա խանում, կին Կարագեօզլու Ալի խանի, մին որդի ծնաւ Մահամմեդ Հիւսէյն խան։

ԻԸ. Խուրշիդ — քօլահ, համամայր Սէիֆուլ դովլէին, կին միրզայ Ալի — Մահամմեդ խան Նըզամուլ դովլէի, որ էր որդի Աբդուլլահ խան Լամին ուլ դովլէի՝ երկու դուստր ծնաւ և մին որդի Նաջաֆ Կուլի խան անուն։

ԻԹ. Շիրին — Ջհան խանում, համամայր վերնոյն, կին Մէհդի կուլի խանի, որդւոյ Հիւսէյն խան Սարդարի Երևանի։

Լ. Մուբասսէ խանում, համամայր վերնոյն, կին Մահամմեդ — կուլի խանի Նշլեք աղասի բաշիի, որ էր որդի Ասուֆուլ դովլէի։

ԼԱ. Կէյսար խանում, համամայր Նահեան միրզին, ամուսին Պասրվու Աֆշար Սուլէյման խանի, ծնաւ մի որդի Մահամմեդ — Վալի խան անուն։

ԼԲ. Սարա — Սուլթան խանում, համամայր վերնոյն, կին Որմեցի Աֆշար Ջհանգիր խանի։

ԼԳ. Աղայ Բէգում, կին միրզայ Ալի Նազար — Ջրիրցւոյ, որ էր Մօլայ բաշի, ծնաւ մին դուստր։

ԼԴ. Շահ Ջհան խանում՝ սա ամուսնակից լինելով շահի հօր քվորն, չկամենալով պալատումն յանուանէ կոչել, տուին տիտղոսն Խան Բեգի. ամուսնացաւ Գիլանցի ասպարաշի միրզայ Աբդուլ — Թաղիի հետ, ծնաւ մին դուստր։

(Ի յետոյ)։

ԳԱԼՈՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ։

(*) Կուլամ — Հիւսէյն Սրփահդարի մայրն էր Հայ գերուհի բերած Տաճկաստանէն՝ եւ հայրն՝ Վրաստանի Հայերէն, Իւսուֆ խանն Սուփահդար - Սուփահ Աբաղստանի, այս ինքն Սպասալար։ Սոցա կենսագրութեանց մէջն կը յիշուին երբ և զի՞արդ է հայրն ընկած գերի և երբ՝ որդին պաշտօն ստացած և ի՞նչ հոյակապ ծառայութիւններ են նոքա արած Պարսկաստանին։